Կազմված է 03.11.2018թ., բաղկացած է 14 թերթից

Ընդունված է

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադիր համագումարի որոշմամբ

03 նոյեմբեր, 2018թ.

Տպագրված է 2 օրինակից

Օրինակ 2

Գրանցված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 13.11.2018թ.

Գրանցման համար՝ 211.172.1045669

ՀՎՀՀ՝ 02687074

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործադիր մարմնի քարտուղար

Սուրեն Սահակյան

«ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՐՈՇՈՒՄ» ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

հանրային կյանքի կազմակերպման հայեցակարգի վերաբերյալ

Սոցիալական քաղաքականություն

Հայաստանի Հանրապետությունը հռչակվել է սոցիալական պետություն: Այն պետք է հստակեցնի քաղաքացիների նկատմամբ իր պատասխանատվության սահմանները: Պետության սոցիալական քաղաքականության նպատակը պետք է լինի բարեկեցության, մշակութային զարգացման ցանկացած մակարդակում գտնվող քաղաքացու համար ապահովել բարեկեցության, մշակութային զարգացման, սոցիալական ապահովության ավելի բարձր մակարդակ տեղափոխվելու բոլոր պայմանները:

Պետության սոցիալական քաղաքականության վերջնական թիրախը համընդհանուր բարեկեցության և հանրային համերաշխության պետության կայացումն է: Սա ենթադրում է, որ երկրում չպետք է լինեն անոթի, կրթության ցածր ցենզ, անօթևան, սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով վատառողջ քաղաքացիներ: Համերաշխության ու սոցիալական պատասխանատվության մակարդակի իդեալ կարող է համարվել վիճակը, երբ աշխատունակ ցանկացած քաղաքացի իր աշխատանքով բարեկեցիկ ապրելու հնարավորություն ունի և այդ հնարավորությունից չօգտվելը պատիվ չի բերում իրեն, իսկ անաշխատունակները ապրում են արժանապատիվ ու ապահովված:

Ընդհանրապես, կենսագործունեության որևէ փուլում դժվարությունների հանդիպած քաղաքացիները պետք է զգան պետական հոգածությունը՝ իր հնարավորությունների ողջ ծավալով: Գործնականում դա կարող է դրսևորվել աշխատատեղերի ստեղծման արդյունավետ քաղաքականության վարմամբ, աշխատունակ քաղաքացիների մասնագիտական վերապրոֆիլավորման հնարավորությամբ, համընդհանուր բարեկեցությանն ուղղված ու աղքատության հաղթահարմանը միտված և արդյունքի արդար բաշխման պետության վարած քաղաքականությամբ և այլն:

Կրթություն

Մենք կրթությունը դիտարկում ենք իրավունք, որի հնարավոր առավելագույն հասանելիությունն ու որակի ապահովումը պետության հոգածության առարկան են: Եթե մի քաղաքացի կարող է ավելի որակյալ կրթություն ստանալ, քան մյուսը, ապա վերջինիս իրավունքը կարելի է խախտված համարել: Ընդ որում՝ քաղաքացու որևէ տարբերություն՝ լինի դա սոցիալ-տնտեսական վիճակը, սեռը, դավանանքը, թե այլ հանգամանք, չի կարող խոչընդոտ հանդիսանալ նրան որակյալ, հասանելի կամ անվճար կրթություն ստանալ:

Կրթության նպատակը անձի ինքնաճանաչողությանը, ունակությունների բացահայտմանը, ստացած տեղեկատվության և գիտելիքի վերլուծությանը, այլ ոլորտներին ինտեգրմանը նպաստելն է: Կրթական համակարգում անհրաժեշտ է բալանսավորել ինտելեկտուալ ոլորտում արդեն տարվող աշխատանքը՝ էմոցիոնալ, հոգևոր, ֆիզիկական ոլորտների զարգացման հետ:

Պետությունը պետք է երաշխավորի անվճար և բոլորի համար հասանելի նախադպրոցական, հանրակրթական և նախնական արհեստագործական ու միջին մասնագիտական կրթություն: Միաժամանակ միայնակ կամ մասնավորի հետ համագործակցելով, կրթաթոշակների, դրամաշնորհների և պետական բյուջեից այլ հատկացումների միջոցով պետք է ապահովի հասանելի բուհական և հետբուհական կրթություն, ինչպես նաև շարունակական կրթություն ստանալու հնարավորություն՝ այդ թվում նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով:

Գիտություն

Գիտության համակողմանի և խորքային զարգացումը պրոգրեսիվ տնտեսության, սոցիալ-տնտեսական վիճակի, մարդու և հասարակության պաշտպանվածության, պետության պաշտպանու-նակության ապահովման կայուն երաշխիք է:

Պետական քաղաքականության և գիտության շահերը ոչ միշտ են մեկտեղվում, օրակարգերը՝ համընկնում. գիտությունը ենթադրում է երկարատև և հեռակա ծրագիր, այն չի կարող լինել պետության հավերժ կցորդը և անկամ ծառան: Գիտական իրական նվաճումներ ունենալու համար պետությունը պիտի վերանայի իր սահմանափակող դերը, խրախուսի

գիտության ինքնուրույն և գործուն կառավարումը, գիտությանը թույլ տա ունենալ իր տեսիլը: Գիտաշխատողը, որն ինքնին կապիտալ է, կախման մեջ է հայտնվում տնօրինությունից, մինչդեռ նրա գոյությամբ է պայմանավորված ինստիտուտի գոյությունը: Գիտական ոլորտը կարգավորող օրենքները հիմնականում թերի են, անհստակ, ծառայում են առանձին փոքրաթիվ խմբերի շահերին, երաշխավորում դրանց վերարտադրության հնարավորությունը և տրամադրում են մեծամասնությանը ճնշելու, շահագործելու հստակ մեխանիզմներ: Օրենքների վերանայումը օրակարգային է՝ գիտական հիմնարկներում որոշումների կայացումը բաց ու մասնակցային դարձնելու, գիտական աշխատանքը փակ կառավարման վնասներից ազատագրելու համար:

Գիտության և կրթության միջև կապը պահպանվում է մի խողովակով, որն ապահովում է ակադեմիական ոլորտում մշակված արժեքային կաղապարների անցումը բարձրագույն ուսումնական միջավայր: Այս երկու բնագավառի միջև գործնական կապը խզված է, ինտեգրումը բացակայում է: Գիտությունը պիտի մուտք գործի բարձրագույն կրթական համակարգ. վերջինիս գոյությունն առանց հետազոտական աշխատանքի մշակույթի՝ ինքնանպատակ է:

Բուհերը պետական և մասնավոր պատվերների միջոցով պետք է հանդիսանան գիտական կենտրոններ և գիտության խթանիչներ: Միևնույն ժամանակ՝ գիտական ինստիտուտները պետք է ներառեն կրթական ծրագրեր:

Առողջապահություն

Առողջապահական ցանկացած հայեցակարգի հիմքում պետք է լինի մարդասիրությունը, հանրության առողջ և անաշխատունակ խմբերի միջև համերաշխությունն ու փոխօգնությունը: Կամայական քաղաքացու որևէ տարբերություն մյուսից իր համար չի կարող խոչընդոտ հանդիսանալ՝ օգտվել որակյալ և/կամ անվճար բժշկական ծառայություններից:

Ելնելով առողջապահության ներկա խնդիրներից՝ պետք է առանձնացնել մի քանի անկյունաքարային, համակարգային լուծումներ:

Պետության խնդիրն է առողջապահության ոլորտի գործունեության հիմքում ընկած, շուկայական հարաբերություններին բնորոշ «նվազագույն ծախս-առավելագույն շահույթ» հայեցակարգը փոխարինել «նվազագույն ծախս-առավելագույն առողջություն» հայեցակարգով:

Թեև առողջապահական գործունեությունը պահանջում է լիցենզավորում, սակայն լիցենզավորվում է առողջապահական հաստատության գույքը, բայց ոչ սպասարկող անձնակազմը: Կադրերը առողջապահական համակարգում ամենաթույլ օղակն են: Որակի ապահովման համար անհրաժեշտ է բժշկական կադրերի լիցենզավորման անկախ և օբյեկտիվ համակարգի ներդրում:

Թե՛ ծախսերի կրճատման, և թե՛ որակյալ բուժսպասարկման հիմնասյունը ապացուցողական բժշկության հիման վրա ստեղծված ուղեցույցերն ու գործելակարգերն են: Բուժապահովման ոլորտում այս փաստաթղթերի մասսայական իմացությունն ու կիրառությունը հնարավոր է միայն որակավորման քննությունների գոյության պայմաններում: Սրանց կիրառությունը կբերի հանրապետությունով մեկ ստանդարտիզացված աշխատանքի՝ բուժօգնության տարբեր փուլերում, ինչով կպակասի անպատեհ և ավելորդ հետազոտությունների, դեղորայքային բուժման ու միջամտությունների անցկացումը, ու խիստ

կբարձրացվի կատարված ծախսերի և աշխատանքի արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, ստանդարտիզացված մոտեցումները պակասեցնում են բժկական սխալի հավանականությունը և ավելացնում բժշկի իրավական պաշտպանվածությունը:

Առողջապահական համակարգի կազմակերպման գործում պետք է ավելացվի պետության մասնակցությունը: Լաբորատոր հետազոտությունները ներկայումս ինքնարժեքից 2-3 անգամ թանկ են վաճառվում, սիրտանոթային վիրահատությունները՝ ինքնարժեքից կրկնակի թանկ: Պետությունը նույն այդ ծառայություններն իր քաղաքացիներին կարող է ինքնարժեքով տրամադրել պետական բուժհաստատություններում: Սա ընդամենը գների վերահսկման և ծախսարդյունավետության բարձրացման մեկ օրինակ է:

Ընդհանրապես, կանխարգելիչ բժշկության դրույթները պետք է կիրառել ոչ թե ընտրովի, այլ ամբողջության մեջ: Դա նշանակում է ոչ միայն պատվաստումների իրականացում, այլև սկրինինգային ծրագրերի պատշաճ իրագործում, արդեն զարգացած հիվանդության բարդությունների կանխարգելում, և, վերջին հաշվով, ավելորդ հետազոտությունների և միջամտությունների բացառում:

Անհրաժեշտ է պարտադիր, համընդհանուր պետական ապահովագրական համակարգի ներդրում, որն իր վրա կվերցնի առողջապահական ծախսերի մեծ բաժինը՝ տեղ թողնելով նաև մասնավոր ապահովագրության համար: Ապահովագրության մեջ պետք է գործի սոցիալական արդարության և համերաշխության սկզբունքը:

Առողջապահական բարեփոխումները պետք է արվեն փուլային կերպով և ոլորտ առ ոլորտ, որպեսզի վերակսկելի լինեն թե՛ կատարված ծախսերը, թ՛ե բուժսպասարկման որակը: Առանց որակի վերահսկման գործուն մեխանիզմների՝ ներկայիս առողջապահական համակարգ բաց թողնված ֆինանսական հոսքերի զգալի մասը դատապարտված է փոշիացման:

Կանանց սոցիալական պաշտպանվածություն

Պետությունը ժամանակավոր կարգավորիչ գործիքներ կիրառելու միջոցով կարող է սեռերի իրավահավասարության հարցը լուծել՝ այն իրավական ու հռչակագրային մակարդակից բարձրացնելով գործնական ու մշակութային մակարդակ:

Կանայք կատարում են մեծ քանակությամբ չվարձատրվող աշխատանք: Մասնավորապես՝ չվարձատրվող աշխատանքը ներառում է երեխաների և տարեցների խնամքը, տնային տնտեսությունը, աշխատանքը խոհանոցում և այգում: Առաջարկում ենք չվարձատրվող աշխատանքը նույնպես ներառել ստաժի հաշվարկման մեջ, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող երեխայի և ծերերի խնամքի ժամանակահատվածը լիովին հաշվարկել որպես աշխատանքային ստաժ, այլ ոչ թե միայն դրա 10 տարին, ինչպես այն կարգավորվում է ներկայիս օրենսդրությամբ:

Գյուղաբնակ և բացառապես գյուղատնտեսությամբ զբաղվող կանանց սոցիալական իրավունքների իրացման նպատակով իր հողատարածքը մշակող և ինքնազբաղված համարվող կանանց գերակշռող մեծամասնությունը զրկվում է երեխայի խնամքի նպաստ, ապա հետագայում բարձր կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս կատեգորիայի կանանց համար հարկավոր է մշակել հարկման օպտիմալ մեխանիզմներ, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռնվի՝ օգտվելու վերը նշված սոցիալական իրավունքներից:

Մինչև երեք տարեկան երեխա խնամող մայրերի 83%-ը, որոնք կարող են նշանակալիորեն ընդլայնել աշխատուժը ողջ տնտեսության մակարդակով, չեն վերադառնում

աշխատանքի՝ պատճառաբանելով երեխայի խնամքի այլընտրանքային տարբերակների բացակայությունը:

Անհրաժեշտ է կարճաժամկետ հատվածում Երևանի և Հայաստանի խոշոր համայնքերում անհապաղ նախաձեռնել և իրականացնել վաղ մանկության խնամքի ծառայությունների ներդրման ծրագիր՝ նախադպրոցական հաստատությունների ծառայությունների ընդլայնման միջոցով:

Կանանց սոցիալական պաշտպանվածությունը չի սահմանափակվում միայն վերը նշված դրույթներով և հետագայում մեր կողմից մշակվող քաղաքականություններում ընդգրկվելու են այլ ծրագրեր:

Տնտեսություն

Պետության խնդիրն է չափավոր ներգործել տնտեսության վրա այնպես, որ ստեղծվի համընդհանուր բարեկեցության պետություն: Այն ենթադրում է հարստության արդար բաշխում և հանրային պատասխանատվություն այն քաղաքացիների համար, որոնք իրենց համար արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու հնարավորություն չունեն: Տնտեսությունը պետք է կառուցվի այնպես, որ այն հանգեցնի հանրային հարաբերությունների արդարության:

Կարծում ենք, որ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունն ու վարչարարությունը որպես պետական բյուջեն ամեն գնով լցնելու միջոց դիտարկելը սխալ քաղաքականություն է: Դրանք ընդամենը գործիքներ են, որոնք տնտեսական աճի, արդյունքի արդար բաշխման մեխանիզմներ են տալիս, որոնք մեզ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներիս, կօգնեն ապրել ավելի արդար ու բարեկեցիկ միջավայրում: Այդ քաղաքականությունների մշակման հիմքում արդյունքի արդար բաշխումը պետք է լինի այնպես, որ լավագույն հավասարակշռվածությունը գտնվի տնտեսությանը բարձր հարկերով չխանգարելու և պետության ստանձնած սոցիալական պարտավորությունները կատարելու միջև:

Կուսակցությունը սոցիալ դեմոկրատական գաղափարախոսության արժեքների կրող է, ինչը ենթադրում է, որ սոցիալական արդարությունը, մարդու բարեկեցությունն ու մարդու իրավունքները գերագույն արժեքներ են: Այս արժեքների իրագործման համար անհրաժեշտ նախապայմաններն են մասնակցային և սոցիալական-շուկայական տնտեսությունը, որին պետությունը միջամտում է՝ նպատակ ունենալով իր քաղաքականություններով կանխել շուկայի ձախողումները և/կամ շտկել դրանք:

Մեր քաղաքականությունները լինելու են շրջադարձային և երկրի ամբողջ տարածքում հասցեագրելու են միջավայրային և ոլորտային մարտահրավերներ:

Հանրային կառավարման համակարգը, հանդիսանալով միջավայրը ձևավորող ամենազդեցիկ գործոն, առանձնահատուկ ուշադրության է արժանի: Ուստի, մեր քաղաքականությունները այս ուղղությամբ ծավալվելու են հանրային կառավարման համակարգի հետևյալ ուղղություններով՝

- հանրային կառավարման համակարգի բարեփոխումներ,
- քաղաքականությունների ձևավորում, համակարգում և հաշվետվողականություն,
- հանրային ծառայությունների մատուցում,
- մարդկային ռեսուրսների կառավարում,
- հանրային ֆինանսների կառավարում՝ ներառյալ պետական գնումներ:

Այս բոլոր ուղղություններով մասնակցային և ներառական սկզբունքներով ձևավորելու ենք փաստերի վրա հենված զարգացման քաղաքականություններ, որոնք հնարավորություն կտան պետության միջամտությունը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում դարձնել հնարավորինս հիմնավորված և արդյունավետ: Արդյունքում ունենալու ենք հանրային

ռեսուրսների ձևավորման և օպտիմալ տեղաբաշխման, ինչպես նաև քաղաքացիներին որակյալ հանրային ծառայությունների մատուցման համակարգեր: Այս գործընթացներում ապահովելու ենք նաև թափանցիկություն և հաշվետվողականություն:

Մեր այս քաղաքականություններով արմատապես փոխելու ենք տնտեսության մեջ առկա խաղի կանոնները՝ վերացնելով կորզող բոլոր հաստատությունները և գործիքները, որոնք մրցակցային անհավասար պայմաններ են ստեղծում:

Շուկան ապամենաշնորհելով և ստեղծելով խաղի հավասար կանոններ՝ հանրային և տնտեսական քաղաքականությունների միջամտությամբ զարգացնելու ենք տնտեսության երկրորդային և երրորդային սեգմենտները՝ երկարաժամկետում նպատակադրելով զարգացնել նաև չորրորդային՝ բարձր տեխնոլոգիաների սեգմենտը: Այս ուղղությամբ մեր հեռանկարն է տնտեսական քաղաքականություններով նպաստել ադրյունաբերության և ծառայությունների մեջ երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը և մրցունակության բարձրացմանը, այդ մրցունակ ուղղությունները թիրախավերելով՝ հասնել տնտեսության կառուցվածքի վերափոխման՝ հանքարդյունաբերական-ագրարայինից դեպի արդյունաբերական, ծառայությունների և բարձր տեխնոլոգիաների տնտեսության:

Այս ուղղությամբ մեր քաղաքականությունները իրականացնելիս չենք առաջնորդվելու միայն պահի առաջնահերթություններով և գնահատելու ու հաշվի ենք առնելու նաև այդ գործողությունների ազդեցությունը հաջորդ սերունդների վրա: Այս գիտակցումով տնտեսությունը վերոգրյալ ուղղություններով զարգացնելուն զուգընթաց՝ հետ ենք մղելու մետաղական հանքարդյունաբերությունը, իսկ պետության զարգացման կարիքներից ելնելով՝ եզակի դեպքերում մետաղական հանքերի շահագործումը ամբողջովին կլինի պետության հսկողության և կառավարման ներքո: Սակայն նույնիսկ այս դեպքերում այն չի իրականացվի ի վնաս բնության և քաղաքացու կյանքի ու առողջ ապրելու իրավունքի: Այս հեռանկարի հիմքում նաև այն գիտակցումն է, որ ներկան ու ապագան երկրի ու քաղաքացու կյանքը վտանգի տակ դնող տնտեսական քայլերը նպաստում են նաև արտագաղթին և սահմանափակում հայրենադարձությունը:

Գտնում ենք նաև, որ անարդար է հանքարդյունաբերությունը նույն դրույքաչափով հարկել, ինչ արդյունաբերության մյուս ենթաճյուղերը: Ըստ էության, հանքարդյունաբերական ձեռնարկությունների կատարած աշխատանքը ոչ թե արդյունաբերական արտադրությունն է, այլ հանրությանը պատկանող ընդերքի հարստությունը արդյունահանելու ծառայությունը: Համապատասխանաբար, այն պետք է հարկվի բացարձակապես այլ ռեժիմով՝ որպես հանրությանը մատուցվող ծառայություն:

Տնտեսության զարգացման խթան հանդիսացող տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքները լինելու են մեր ջանքերի կիզակետում: Ձգտելու ենք պատասխանատու և արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության միջոցով կրճատել պետական պարտքի բեռը, նվազեցնել ընթացիկ ծախսերը և արդյունքում մեծացնել ֆիսկալ միջակայքը: Սա հնարավորություն կտա շեշտակի մեծացնել տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքներում պետության կողմից իրականացվող կապիտալ ներդրումները: Սոցիալական ենթակառուցվածքների մասով պետությունն ունենալու է մեծ ներգրավվածություն՝ պարտադիր առողջության ապահովագրության համակարգի ներդրմամբ և դրա զարգացմանը անմիջական մասնակցություն ունենալու միջոցով: Սրա առնչությամբ մեր տեսիլն է ներդնել առողջապահական, սոցիալական և կրթական համակարգեր, որ իրենց որակով չեն զիջի արևմտյան զարգացած երկրների նույնանուն համակարգերին:

Գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի հանրության պարենային անվտանգության հիմնահարցը՝ հաշվի առնելով նաև պատերազմի վերսկսման հավանականությունը: Հայաստանում գյուղատնտեսությունը պետք է միտված լինի ստանալ բնական, էկոլոգիապես մաքուր արտադրանք՝ այն դարձնելով բրենդային քաղաքականություն: Գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը պետք է հասցնել նվազագույնի՝ այն փոխարինելով տեղում արտադրված որակյալ արտադրանքով: Արտադրության ոլորտում նաև պետական աջակցությամբ պետք է աստիճանաբար կիրառել

միջազգային լավագույն փորձառությունն ու նորագույն տեխնոլոգիաները, ոլորտում ծախսվող էներգիան փոխարինել արևային և վերականգնվող այլ էներգատեսակներով

Ե՛վ տնտեսական, և՛ սոցիալական ենթակառուցվածքների գծով զարգացնելու ենք համագործակցություն մասնավոր հատվածի հետ և կառուցելու ենք համակարգեր, որոնք վերոգրյալ ուղղություններով զարկ կտան տնտեսության զարգացմանը, ինչն իր հերթին կբարձրացնի քաղաքացիների կենսամակարդակը և բարեկեցությունը: Այս գործընթացում, հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակ լինելը, պետական ներդրումները կիրականացվեն՝ ըստ դրանց ֆինանսատնտեսական և սոցիալական առավելագույն հատույց ստեղծելու կարողության:

Տնտեսության զարգացման գործում մեր գերխնդիրն է լինելու հավասար մրցակցային պայմաններ ստեղծելով ապահովել կայուն և ներառական տնտեսական աճ, և այս գործընթացում համապատասխան կարևորություն է ստանալու նաև գների կայունության խնդրի արդյունավետ իրագործումը և ֆինանսական համակարգի զագացումը:

Արտաքին քաղաքականություն

Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունները պետք է կառուցվեն՝ հիմքում ունենալով երկու հիմնական ելակետ՝ պետական շահ և միջազգային գործող իրավունք: Հայաստանը պետք է հստակեցնի իր իրավունքների և պարտականությունների տիրույթը: Հնարավոր բոլոր հարցերը պետք է դիտարկվեն և լուծվեն դրանց շրջանակներում:

Մենք Արցախի հարցը չենք դիտարկում որպես նախկին Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության տարածքում տեղի ունեցող ներպետական հակամարտություն: Գտնում ենք, որ Արցախի շուրջ հակամարտությունն իր հիմքում ունի 1991 թ.ԱՊՀ կառույցին Հայաստանի Հանրապետության առանց հատուկ կարծիքի միանալու և նախկին Խորհրդային Միության տարածքում պետությունների ճանաչման Եվրոպական խորհրդի 1991 թ.-ին որդեգրված սկզբունքներից հետ կանգնելու անարդար որոշումները, որոնք Ադրբեջանին Արցախի ժողովրդի դեմ լեգալ ուժ կիրառելու իրավունք են տվել: Եվ, հետևաբար, արտաքին քաղաքականության մարտահրավեր ենք դիտարկում Ադրբեջանին այդ իրավունքից զրկելը:

Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Արցախի Հանրապետության բնակչության կյանքի, ինքնիշխան լինելու, անվտանգ ապրելու, միջազգային իրավունքով ճանաչված սեփական կարգավիճակը որոշելու իրավունքների երաշխավորի դերը: Հետևաբար, մեր կուսակցության քաղաքականությունն այս հարցում հիմնված է լինելու նաև Արցախի հանրության այս իրավունքների ազատ կենսագործման հնարավորությունների ապահովման վրա:

Մենք գտնում ենք, որ պետք է վերանայել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված պայմանագրերը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության: Սա առաջին հերթին վերաբերում է սահմանապահ զորքերի ծառայության ռեժիմին և կարգավիճակին: Նույնը կարելի է ասել ռուսական 102-րդ ռազմաբազայի գործունեության ռեժիմի և կարգավիճակի մասին:

Որպես Հայաստանի առանձնահատկություն ենք դիտարկում այն հանգամանքը, որ Արցախյան պատերազմից հետո երկիրը դարձել է տարածաշրջանային անվտանգության արտահանող: Մյուս առանձնահատկությունը երկրի աշխարհագրական դիրքն է, որը տարբեր հակասական շահեր ունեցող տարածաշրջանում մեծ քաղաքական կշիռ և քաղաքական հարցերում մանևրելու հնարավորություն է տալիս պետությանը: Հաջորդ առաջանձնահատկությունը պատմականորեն ձևավորված մեծ Սփյուռքն է, որը պետական շահի առաջխաղացման գործում կարող է էական ազդեցություն ունենալ:

Որպես մարտահրավերներ ենք դիտարկում երկրի տնտեսական շահի արդյունավետ սպասարկումը, դիվանագիտական քրտնաջան աշխատանքի արդյունքում Հայաստանի և Արցախի քաղաքացիների սահմանադրորեն ամրագրված սահմաններում ֆիզիկական

անվտանգության լավագույն պաշտպանությունը, արցախյան հարցի խաղաղ կարգավորումն ու տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատումը: Ելնում ենք նրանից, որ հարևաններին չենք կարող փոխել, և բարիդրացիական հարաբերություններն այլընտրանք չունեն: Այսպիսի քաղաքականությունը պետք է ելնի այն տրամաբանությունից, որ յուրաքանչյուր սերունդ մյուսներին պետք է փոխանցի ավելի ապահով ֆիզիկական տարածք:

Մշակույթ

Հայ հասարակության քաղաքական կյանքում դրական մեծ ալիք առաջ բերեց թավշյա, ոչ բռնի հեղափոխությունը: Այդ ալիքը պետք է տարածվի նաև մշակույթի վրա, ծնի և ծավալի խորքային փոփոխություններ:

Ըստ այդմ, կուսակցությունն անհրաժեշտ է համարում լիովին վերանայել մշակույթի, մշակութային գործչի, մշակութային հաստատությունների դերը հասարակության և պետության մեջ՝ առաջ քաշելով արդարության, համերաշխության սկզբունքներն ու համապատասխան բովանդակությունը: Արվեստի և մշակույթի դերակատարը պետք է լիարժեք ներգրավված լինի հասարակական գործերում և իր մասնագիտական կարողությունները ներդնի՝ վերլուծելու, հարցադրելու մեր կյանքն ու առօրյան, նախանշելու զարգացման հեռանկարները:

Ընդսմին, լայն առումով, մենք հակված ենք տեղային մշակույթը դիտարկել որպես համաշխարհային իրողությունների մաս և գործորդ: Հայ մշակույթը պետք է բաց լինի աշխարհի առաջ և միաժամանա այնքան արժեքավոր, որ աշխարհն էլ վերցնելու բան ունենա հայ մշակույթից:

Մշակութային քաղաքականության ռազմավարության վերանայման շրջանակներում առաջարկում ենք՝

- մշակույթի տարբեր ոլորտներում սովորող մասնագետների ու բուհը նոր ավարտած մասնագետների մուտքը գործնական դաշտ ու նրանց որպես արվեստագետ կայացմանն օգնելը,
- վերանայել մշակութային հիերարխիաները վերարտադրող պետական կարգավորումները և դրանց չափանիշները՝ կոչումներ, մեդալներ և այլն: Սրանք ավելի շատ արտոնություններն ամրագրող գործիք են, մինչդեռ պետք է լինեն այս կամ այն մշակութային գործչի նկատմամբ հասարակության երախտիքի արտահայտում,
- վերանայել գաղփարաբանական առումով պետության միջամտությունն իր իսկ կողմից ֆինանսավորվող նախագծերին: Պետության գործն է ոչ թե նախընտրելի թեմաներ առաջարկելը կամ դրանց իրականացման նախընտրելի ձևեր թելադրելը, այլ որակական պահանջներ սահմանելը և դրանց կատարմանը հասնելու հնար գտնելը,
- պետական հովանավորությամբ ծրագրերի շրջանակում ապահովել մշակույթի որոշակի բազմազանություն և ապակենտրոնացում :

Մինչ օրս մշակույթի ոլորտում պետական ֆինանսավորումը ծանրակշիռ դեր է ունեցել և զգալի չափով պայմանավորել դրա բնույթը: Որպես դրան հակազդեցություն՝ այժմ ունենք մշակույթի նախարարությունը լուծարելու՝ գնալով խտացող մտայնություն: Սակայն թե՛ առաջին, թե՛ երկրորդ մոտեցումները ներկա պայմաններում շահեկան չեն: Հարկ է փնտրել այլ լուծումներ՝ պետական, մասնավոր և հասարակական սեկտորների արդյունավետ համագործակցության տարբերակներ:

Պետք է վերանայել նկարիչների, կինեմատոգրաֆիստների, գրողների և այլ ստեղծագործական միությունների հետ պետության հարաբերությունները: Դրանք ժամանակին ստեղծվել են ոլորտները վերահսկելու և կառավարելի դարձնելու համար, այսօր արդեն ժամանակավրեպ են և կարելի է աստիճանաբար դադարեցնել պետության կողմից դրանց ֆինանսավորումը և համագործակցության այլ ձևաչափեր որոնել:

Կարիք կա վերասահմանելու մշակութային ժառանգության չափանիշները, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանության մեջ ներգրավված հաստատությունների դերը և գործառույթը: Հատկապես հրատապ է ճարտարապետական հուշարձանների պահպանության հարցը:

Ավիացիա

ՀՀ աշխարհաքաղաքական դիրքը հաշվի առնելով՝ սեփական ավիափոխադրողների գոյությունը համարում ենք պարտադիր և իրատեսական:

Դրա համար գլխավոր նախապայմանը համապատասխան իրավական դաշտի ստեղծումն է: Իրավական դաշտը պետք է հայկական ավիափոխադրողներին հնարավորություն տա բոլոր մրցակից ընկերությունների հետ գտնվել հավասարազոր մրցակցային պայմաններում: Այս դրույթները ամրագրված են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) օրենքներում:

Առաջարկվող հաջորդ քայլը միջազգային վճարային համակարգերին և ավիափոխադրողների ալյանսների միանալն է, ինչպես նաև առանձին ավիափոխադրողների հետ համագործակցության պայմանագրերի կնքումը՝ ինչպես ներխմբային, այդպես և ինտերլայն պայմանագրերով: Դրանք տեղական փոխադրողների համար բազմիցս կավելացնեն շուկայի ծավալը տարբեր ընկերությունների հետ համատեղ կատարվող թռիչքների հաշվին: Ինչպես նաև կբերեն տարանցիկ փոխադրումների հնարավորության, որն էլ իր հերթին կբերի թռիչքների աշխարհագրության մեծացման և ոլորտի ընդլայման:

Հաջորդ ուղղությունը, որը գտնում ենք պարտադիր, քաղաքացիական ուղղաթիռների շահագործումն է, որոնք շատ շահութաբեր են և միջազգային շուկայում ունեն մեծ պահանջարկ՝ հատկապես հակահրդեհային գործունեության բնագավառում:

Հայաստանի Հանրապետությունում մոտ 20 տարի չեն կատարվել գյուղատնտեսական ավիացիոն աշխատանքներ: Այդ բացը ևս կարելի է կազմակերպել առանց մեծ ծախսերի՝ ժամանակակից մեթոդներով, որոնք գրեթե բացառում են օդանավերի օգտագործումը: Դրանք հիմնականում կատարվում են ԱԹՍ-ով, որն այսօր բավականին արդիական եւ զարգացող ոլորտ է:

Այս ծրագրերը կարելի է իրականացնել ինչպես պետության մասնակցությամբ, այնպես էլ առանց դրա՝ մասնավոր ավիաընկերությունների ուժերով: Դրանք մեծ ներդրումներ չեն պահանջում, քանզի օդանավերը ընդհանրապես չեն վաճառվում կանխիկ գումարով, այլ գնվում են լիզինգային ընկերությունների կողմից: Իսկ պետության մասնակցությունը կարող է կրել միայն մարտավարական ուղղությունների կարգավորման և մուտքերը գանձարան ավելացնելու նպատակով, քանի որ գրագետ կառավարման պայմաններում ավիացիան ոչ միայն անվտանգության գրավական է, այլ նաև շահութաբեր ոլորտ:

Երիտասարդական քաղաքականություն և աշխատանք

Երիտասարդական քաղաքականության ոլորտում մենք առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքներով՝

- երիտասարդական ծրագրերը պետք է լինեն փաստարկված, արդյունավետ, թափանցիկ , ներառական և մասնակցային,

- առավելագույնս օգնել երիտասարդներին ինքաիրացվել, զարգացնել իրենց կարողություններն ու հմտությունները,
- օգնել երիտասարդներին, որպեսզի նրանք լինեն ակտիվ և ներգրավված տարբեր պետական, սփյուռքյան, տարածաշրջանային և միջազգային առաջադիմական շարժումներին,
- աջակցել, որպեսզի երիտասարդները ստանան ճիշտ մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն, և հնարավորինս ստեղծել պայմաններ, որ նրանք ունենան առաջին աշխատանքային փորձ,
- ստեղծել պայմաններ, որ մարզերում ապրող երիտասարդներն ունենան զարգացման հնարավորինս հավասար պայմաններ,
- խթանել միջսերնդային համերաշխությունն ու փոխհամագործակցությունը, ստեղծել պայմաններ ավագ սերնդի առաջադիմական փորձը երիտասարդներին փոխանցելու համար:

Տարածքային կառավարում

Տարածքային համաչափ զարգացումը մարդու և նրա միջավայրի փոխազդեցության ոլորտում է: Ուստի պետությունը պետք է իր վրա վերցնի զարգացումը խթանող միջավայր ձևավորելու առաքելությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ապակենտրոնացում. ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ վերաբաշխելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, եւ ՏԻՄ-երի լիազորությունները դարձնելով բացառիկ և հստակ:

Համայնքների ֆինանսական ապակենտրոնացում. սա ենթադրում է համայնքային բյուջեների մուտքերի կայունության և բազմազանության ապահովում, համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի կատարելագործում և արդյունավետության բարձրացում, համայնքային բյուջեների եկամուտների ձեւավորման եւ ծախսերի կատարման առավելագույն անկախություն գործադիր իշխանությունից, ՏԻՄ-երի ֆինանսական կարողությունների զարգացում:

ՏԻՄ-երի ու նրանց միավորումների հետ խորհրդակցական մեխանիզմի ապահովում. Անհրաժեշտ է մշակել եւ ներդնել քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման գործընթացներում տեղական ինքնակառավարման հետ ուղղակիորեն առնչվող հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց միավորումների հետ խորհրդակցելու իրավունքի իրականացմանն ուղղված ֆորմալ մեխանիզմներ:

Համայնքների վարչական սահմանների փոփոխության, համապետական ծրագրերի և խոշոր տնտեսական ծրագրերի դեպքում համայնքների լսված լինելու իրավունք. անհրաժեշտ է մշակել եւ ընդունել համապատասխան օրենսդրական իրավակարգավորումներ, որոնք կսահմանեն համայնքների լսված լինելու իրականացման եղանակները, մեխանիզմները, ընթացակարգը, ինչպես նաեւ այդ կապակցությամբ համապատասխան մարմինների պարտականությունները:

Տարածքային կառավարման հայեցակարգի վերանայում. տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային կառավարման մարմինների՝ մարզպետարանների փոխհարաբերությունները շարունակում են մնալ ոչ լիարժեք կարգավորված եւ չհստակեցված: Պետք է արմատապես վերանայել տարածքային

կառավարման համակարգը եւ օրենսդրորեն կարգավորել տարածքային կառավարման հարաբերությունները:

Կիրառելով միասնական համակարգչային համակարգեր՝ ընդլայնել գերատեսչությունների կողմից քաղաքացիներին մատուցվող բոլոր ծառայությունները, որպեսզի հասանելի լինեն բոլոր համայնքներում: Այսպիսով՝ մենք նախատեսում ենք տարածքային կառավարման միավորների կամ տարածաշրջանների համար կիրառել տարբերակված հարկային քաղաքականություն, գործազրկության բարձր ցուցանիշ ունեցող տարածքներում տնտեսությունը վերակողմնորոշել դեպի աշխատատար արդյունաբերություն: Միաժամանակ հիմնել պրոֆիլային կրթական հաստատություններ, որոնք միտված են լինելու հետզհետե առավել գիտատար դարձնելու արդյունաբերական տվյալ ճյուղեր:

Դիտարկել ՓՄՁ հարկերը համայնքներին աստիճանաբար թողնելու հնարավորությունը՝ սկսելով առավել խոցելի համայնքներից: Խթանել համայնք-ՓՄՁ կապերը, սոցիալական ձեռնարկատիրությունը եւ իրականացնել քաղաքների մասնագիտացման եւ համաչափ զարգացման ծրագրեր:

Բնապահպանություն

Բնության պահպանությունը, դրա մշտական բարելավումը մեր գերակա առաջնահերթությունն է, մեր բոլոր որոշումներում և դրանից բխող քաղաքականությունների մշակման ժամանակ մենք այն միշտ հաշվի ենք առնելու:

Մենք ընդունում ենք այն սկզբունքը, որ շրջակա միջավայրը, բնությունը և նրա մաս կազմող բոլոր կենսաբանական օրգանիզմները, արարածները և տարրերը մեր մշտական հոգածության և պաշտպանության կարիքն ունեն: Բնության մեջ ոչ մի տեսակ գերակա չէ մյուս տեսակների հանդեպ: Մարդը և մյուս բոլոր կենսաբանական օրգանիզմներն ու բնության տարերը պետք է ապրեն ներդաշնակության, փոխօգնության և հավասարաչափ փոխազդեցության սկզբունքներով:

Տնտեսական առումով Հայաստանի Հանրապետության բնական պաշարները՝ընդերքը, հողը, ջուրը, օդը, բուսական,կենդանական և այլն, նրա ժողովրդի սեփականությունն են, ընդ որում՝ ո՛չ միայն ներկա ժամանակում հաստատված կարգերով հարաբերվող ՀՀ քաղաքացիների, այլև նրանց սերունդների, որոնք հնարավոր է՝ նոր մոտեցումներ որդեգրեն իրենց սեփականությունը տնօրինելու հարցում: Բնությանը և բնական պաշարներին վերաբերող հարցերում անհրաժեշտ է ելնել այն հանրաճանաչ կանխավարկածից, որ «շրջակա միջավայրը մենք ո՛չ թե նվեր ենք ստացել մեր ծնողներից, այլ պարտքով վերցրել ենք մեր զավակներից»: Ուստի բնական պաշարների օգտահանման, բնօգտագործման հարցերում հարկավոր է առաջնորդվել գալիք սերունդներին պատկանող սեփականությունը չյուրացնելու, դրա օգտահանումից նրանց համար ապագայի լավ պայմաններ ստեղծելու սկզբունքներով:

Բնական պաշարների օգտագործումը, ի տարբերություն այլ ոլորտների, իր ամբողջ ծավալով նստած է հանրային ունեցվածքի բազայի վրա, և անարդար կլինի, որ այն հավասար պայմաններով հարկվի՝ տնտեսական գործունեության այլ ձևերի հետ: Բնական պաշարների օգտագործումից և արդյունահամնումից առաջացող հարստությունը բաշխվում է սոցիալական արդարության սկզբունքով և չի կարող ծառայել կլանային կամ ինչ-որ արտոնյալ փոքր խմբերին, կազմակերպություններին կամ կորպորոցիաներին՝ լինեն դրանք տեղական թե միջազգային:

Մենք դեմ ենք մետաղական նոր հանքերի շահագործմանը, իսկ հանքարդյունաբերական արդեն իսկ գործող համալիրի դեպքում առաջարկում ենք որդեգրել վերը նշված հարկային

քաղաքականությունը և հարկային արտոնություններ տալ հին տեխնոլոգիաներ նոր՝ առավել կանաչ տեխնոլոգիաներով փոխարինող ընկերություններին, իսկ հրաժարվելու դեպքում գանձված հարկային միջոցները ծառայեցնել նաև այդ նպատակին: Երկարաժամկետ կտրվածքով արդեն իսկ գործող մետաղական հանքերը նույնպես պետք է փակվեն: Մենք մշակելու ենք քաղաքականություններ, որ ժամանակի ընթացքում չեզոքցնենք դրանց փակման բացասական տնտեսական ազդեցությունը տեղական համայնքների և ընդհանուր տնտեսության վրա, որից հետո վերջնական փակվելու են բոլոր մետաղական հանքերը:

Բնությունը մեր կենսատարածքն է, որի որակը պետք է շարունակաբար բարելավվի: Այն պետք է առողջ միջավայր հանդիսանա ինչպես մարդկանց, այնպես էլ ներդաշնակ գոյատևող այլ արարածների համար:

Սահմանադրություն եւ ժողովրդավարություն

Կուսակցությունն առաջնորդվելու է սահմանադրականության սկզբունքներով: Մենք գտնում ենք, որ մեր երկրում սահմանադրական կարգը լիարժեք հաստատված չէ, ներկա Սահմանադրությունը դելեգիտիմ է, եւ նախորդ հանրաքվեի արդյունքները կեղծված են: Մեր նպատակն է երկրում վերջնականապես հաստատել սահմանադրական կարգ եւ ընդունել նոր Սահմանադրություն, որի կլինի լեգիտիմ, իսկ դրա մշակման գործընթացը՝ իրապես մասնակցային:

Ուղիղ ժողովրդավարության մեխանիզմներ

Քվազիժողովրդավարական համակարգից իրական ժողովրդավարական համակարգի անցման կարևորգույն նախապայմաններից մեկը ուղիղ ժողովրդավարության այնպիսի մեխանիզմների զարգացումն է, ինչպիսիք են տեղական և հանրապետական հանրաքվեների իրականացման հնարավորությունների և երաշխիքների ապահովմանը ուղղված օրենսդրական բարեփոխումների իրականացումը, ընտրովի պաշտոնյաների հետկանչի մեխանիզմների իրականացման հնարավորությունների և երաշխիքների ապահովմանը ուղղված օրենսդրական բարեփոխումների իրականացումը եւ ԱԺ-ին, կառավարությանը, եւ տեղական ինքնակառավարական մարմիններին անվստահություն հայտնելու և արձակելու ուղիղ ժողովրդավարության մեխանիզմների ներդրմանը ուղղված բարեփոխումների իրականացումը:

Իրավունքի պաշտպանություն և արդարադատություն

Մարդու իրավունքների ու քաղաքացու ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը պետության հոգածության առաջին խնդիրն է: Հայաստանում պետք է լավագույնս պաշտպանված լինեն երկրի յուրաքանչյուր բնակչի բոլոր իրավունքները՝ անկախ նրա սեռից, դավանանքից, տարիքից, սոցիալական վիճակից և այլ տարբերություններից:

Մարդու իրավունքների պաշտպանություն

Պետությունը մարդուն պետք է դիտարկի որպես հիմնարար արժեք: Մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է ներառի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված բոլորը իրավունքներն ու հիմնարար ազատությունները, մեծացնի մարդու իրավունքների պաշտպանության իրացման հնարավորությունները՝ արհեստակցական կազմակերպություններ, վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ, ՄԻՊ, դատարաններ և այլն:

Արդարադատություն

Դատական համակարգը և յուրաքանչյուր դատավոր պետք է լինի անկախ և զերծ որևէ քաղաքական միջամտությունից: Դատական համակարգի բնականոն զարգացման համար անկյունաքարային են հետևյալ հարցերը.

ա) 1991թ.-ից 2018թ.-ի ընթացքում համակարգված ապօրինությունների մեջ դեր կատարած դատավորները պետք է հեռանան դատական համակարգից՝ անցումային արդարադատության շրջանակներում կիրառվելիք վեթթինգի մեխանիզմի իրականացման միջոցով,

բ) նոր դատավորների նշանակման հարցում պետք է ազդեցիկ դառնա մասնագիտական կառույցների կարծիքը: Նման կառույցներն են փաստաբանական պալատը, համալսարանները, իրավաբանների մասնագիտական և իրավապաշտպան կազմակերպությունները: Բարձրագույն դատական ատյանի դատավորների նշանակման հարցում պետք է դիտարկել նրանց անմիջականորեն ՀՀ քաղաքացիների կողմից ընտրելու հնարավորությունը: Պետք է բացառվի անփորձ անձանց նշանակումը դատավորի պաշտոնում,

գ) անհրաժեշտ է ավելացնել դատավորի անկախության ինչպես սոցիալական, այնպես էլ իրավական երաշխիքները: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցել բացառությամբ դատավորի վարքագծի կանոնների խախտման հիմքերով,

Անցումային արդարադատություն

1991թ.-ից 2018թ.-ի ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների հիմնարար խախտումները (օրինակ՝կոռուպցիայի, համապետական ընտրություններ, մարտի 1-ի, պետական կարիքների համար գույքի օտարման, ապրիլյան քառօրյայի զոհեր և այլն) վերացնելու, զոհերի խախտված իրավունքների վերականգնելու՝ ներառյալ արդարացի փոխատուցման իրավունքը, մեղավորների նկատմամբ արդարացի պատժի միջոցներ կիրառելու, պետական ծառայության համակարգը օրինախախտ, ոչ պրոֆեսիոնալ և ոչ բարեխիղճ պետական ծառայողներից մաքրելու, ինստիտուցիոնալ համակարգային բարեփոխումներ իրականացնելու, հասարակական համերաշխություն ապահովելու և ապագայում մարդու իրավունքների հիմնարար խախտումները չկրկնելու համար նոր գումարման Ազգային Ժողովի ձևավորումից հետո երկրում անհրաժեշտ է իրականացնել անցումային արդարադատություն:

Կոռուպցիայի դեմ պայքար

Կոռուպցիայից զերծ Հայաստանի ստեղծումը հանդիսանալու է պետության կարևորագույն ուղենիշներից մեկը: Կոռուպցիայի դեմ պայքարը ուղղված է լինելու հասարակության մեջ կոռուպցիայի՝ որպես անվտանգության սպառնալիքի և հասարակության անհանդուրժողականության ընկալման արմատավորմանը, կոռուպցիայի նկատմամբ քամահրանքի ու ատելության միջավայրի ստեղծմանը: Պետությունը խրախուսելու է հասարակության և հանրային ծառայողների շրջանում ազնիվ կառավարման պահանջարկի ձևավորմանը և հակակոռուպցիոն կառուցակարգերի կյանքի կոչմանը:

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է անցում ապակենտրոնացված համակարգից կենտրոնացված համակարգի՝ կոռուպցիայի դեմ պայքարի անկախ բազմաֆունկցիոնալ (ունիվերսալ) մասնագիտական մարմնի ստեղծմամբ, որն իր գործունեությունը կիրականացնի հակակոռուպցիոն կրթության, կոռուպցիայի կանխարգելման և պատժի անխուսափելիության (իրավապահ գործունեություն և նախաքննություն) հենասյուների հիման վրա:

Էներգետիկա

Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում

է պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ:

Մեր երկրում էներգետիկ անվտանգության խնդիրը հանգում է հետևյալ խնդիրների լուծմանը՝ էներգակիրներից մեծ կախվածություն, էներգաարդյունավետության մակարդակի բարձրացում, էներգիայի սպառման բնական աճի ընթացքում բավարար արտադրող և փոխանցող համակարգի ստեղծում, էլեկտրամատակարարման բաշխիչ համակարգի վերազինում, վերականգնվող էներգետիկայի զանգվածային կիրառում, վառելիքի շուկայի դիվերսիֆիկացում, մատակարարվող գազի որակի ստուգման պարզ ու թափանցիկ համակարգի ստեղծում, ոլորտի որակյալ մասնագետների ներգրավում և կրթություն: